**«4D» սակագնային փաթեթի պայմաններ**

**«4D»**-ն ֆիքսված և բջջային ծառայությունների միասնական փաթեթ է, որը ներառում է Ֆիքսված ինտերնետի, ԱյՓի հեռուստատեսության, Ֆիքսված հեռախոսակապի, բջջային ձայնային և բջջային ինտերնետի ծառայություններ: **«4D»** ծառայությունների փաթեթը մատուցվում է Ռոստելեկոմի, «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ և ՎիվաՍել-ՄՏՍ կողմից: Միանալով **«4D»** ծառայությունների փաթեթին՝ բաժանորդը միաժամանակ միանում է ՎիվաՍել-ՄՏՍ-ի (բջջային ծառայությունների մասով), Ռոստելեկոմի և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ (ֆիքսված ծառայությունների մասով) հիմնական պայմաններին: **«4D»**-ին կարող են միանալ միայն ֆիզիկական անձինք և բացառապես 1 տարի (365 օր) պարտադիր բաժանորդագրության պայմանով:
Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև «4D» ծառայությունների փաթեթի բաժանորդագրության պայմաններով սահմանված պարտադիր ժամկետի՝ 1 տարի, ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi Սարքը անհրաժեշտ է Բաժանորդին Ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:
**«4D»** փաթեթում ներառված ֆիքսված հեռախոսակապի միջոցով միջազգային զանգերի համար գործում են Ռոստելեկոմի «Միջազգային հեռախոսակապ» ծառայության սակագները:

**Բջջային ծառայությունների պայմաններ**

- Բջջային ծառայությունները մատուցվում են համաձայն ՎիվաՍել-ՄՏՍ-ի շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների:
- 5 ԳԲ ինտերնետ փաթեթը սպառելուց հետո ավտոմատ կերպով ակտիվանում է 500 ՄԲ/100դրամ փաթեթ՝ 1 օր ժամկետով, որն ակտիվանում է՝ կախված ընթացիկ հաշվի սահմանաչափից: Սահմանաչափը կիրառվում է միայն Օպերատորի կողմից ամսական կտրվածքով մատուցվող հիմնական՝ ձայնային, SMS, ինտերնետի, ինչպես նաև հավելյալ փաթեթի ավտոմատ ակտիվացման ծառայությունների նկատմամբ: Ռոումինգ ծառայություններից օգտվելիս ամսական սահմանաչափը չի կիրառվում և ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների ամսական հաշիվը կարող է գերազանցել այդ սահմանաչափը:
- Փաթեթում ներառված խոսելաժամանակի, SMS հաղորդագրությունների և բջջային ինտերնետի հաշվեկշիռը ստուգելու համար անհրաժեշտ է ուղարկել *209# հրահանգը:
- Սակագնային պլանի փաթեթների ակտիվ լինելու դեպքում հավելվածներից օգտվելիս հիմնական ինտերնետ փաթեթի մեգաբայթերը չեն օգտագործվում:
- Տրամադրվող ձայնային, SMS և ինտերնետ ծառայությունները սպառելուց կամ դրանց գործողության ժամկետի ավարտից հետո ՎիվաՍել-ՄՏՍ-ը բաժանորդներին SMS ծանուցումներ ուղարկելու պարտավորություն չի կրում: Նշված ծանուցումներն ուղարկվում են չնախատեսված ծախսերից խուսափելու հարցում բաժանորդներին աջակցելու նպատակով՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում: Ուստի, SMS ծանուցումները բաժանորդի կողմից չստանալը կամ ուշացումը կարող է պայմանավորված լինել Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից, այդ թվում՝ բաժանորդային սարքավորման որակից և տեխնիկական

առանձնահատկություններից, ռադիոալիքների տարածմանը և ռադիոսարքավորումների բնականոն շահագործմանը խոչընդոտող հանգամանքներից, բաժանորդի գտնվելու վայրի առանձնահատկություններից: Ծառայությունների օգտագործումից առաջացած հավելյալ ծախսերից խուսափելու համար՝ բաժանորդը պետք է համապատասխան USSD հրահանգի միջոցով վերահսկի իրեն տրամադրված ծառայությունների ծավալը և գործողություն ժամկետը:

- Ներառված խոսելաժամանակն ու SMS-ները հնարավոր չէ օգտագործել պրեմիում/կարճ համարներով զանգահարելիս կամ SMS ուղարկելիս:
- «4D» փաթեթին հասանելի չեն «BIT», «Super BIT», «Super զույգ», «Super 0 օրական» ծառայությունները:
- Սակագնային պլանով տրամադրվող խոսելաժամանակը, SMS ուղարկելու հնարավորությունը, ինտերնետը, ինչպես նաև «Viber», «WhatsApp», «Messenger», «Telegram», «Zangi» հավելվածներից առանց ինտերնետի տարիֆիկացման օգտվելու հնարավորությունը հասանելի չեն ռոումինգում:
- Ներցանցային զանգեր կատարելիս նախ սպառվում է «4D» փաթեթով տրամադրվող 200 րոպե խոսելաժամանակը, ապա՝ 10000 րոպե ներառող խոսելաժամանակի փաթեթը:
- Դեպի ՄՏՍ Ռուսաստան և Vodafone Ուկրաինա ուղիղ զանգեր կարելի է կատարել հետևյալ կոդերով սկսվող հեռախոսահամարներին. ՄՏՍ Ռուսաստան՝ +791, +798, +79780, +79781, +79782, +79787, +79788, +7495, +7499 Vodafone Ուկրաինա՝ +38050, +38066, +38095, +38099
- ՎիվաՍել-ՄՏՍ-ը չի երաշխավորում դեպի ՄՏՍ Ռուսաստան և Vodafone Ուկրաինա զանգերի ծառայության մատուցումը՝ Ռուսաստանում կամ Ուկրաինայում զանգը ստացող հեռախոսահամարը՝ համարների տեղափոխելիության ծառայության շրջանակում Ռուսաստանի կամ Ուկրաինայի մեկ այլ բջջային ցանցից տեղափոխված լինելու դեպքում: Ծանոթացեք միջազգային զանգերի սակագներին:
- Փաթեթի գործողության ժամկետում չսպառված ծառայությունները հաջորդ ամիս չեն տեղափոխվում:
- Սույն սակագնային պլանի շրջանակներում ընթացիկ ամսվա ցանկացած օր պայմանագիրը կասեցնելու կամ խզելու դեպքում բջջային կապի ամսավճարը գանձվում է ամբողջությամբ:
- Բոլոր գները ներառում են ԱԱՀ:

**Ծառայությունների միացման, անջատման և վճարման պայմանները**

**«4D»** ծառայությունների փաթեթում ներառված բջջային ծառայություններն ակտիվանում են բաժանորդագրության պահից սկսած առավելագույնը 1 օրվա ընթացքում, իսկ ֆիքսված ծառայություններն ակտիվանում են բաժանորդագրության պահից սկսած առավելագույնը 10 օրվա ընթացքում:

**«4D»**-ի բաժանորդը պարտավոր է ինքնուրույն ճշտել վճարման ենթակա գումարը և Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա մինչև 15-ը ներառյալ վճարել Հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված գումարը՝ անկախ այն հանգամանքից՝ բաժանորդը տվյալ ամիս օգտվել է ծառայություններից, թե՝ ոչ:

Եթե **«4D»**-ի շրջանակում ակտիվացվել են հավելյալ ծառայություններ կամ կատարվել են զանգեր և Բաժանորդը մինչ սահմանված վերջնաժամկետը չի վճարում հաշվետու ամսվա համար հաշվեգրված բաժանորդային պարտքն ամբողջությամբ, ապա կասեցվում է **«4D»** ծառայությունների փաթեթը՝ թե՛ ֆիքսված, թե՛ բջջային բոլոր ծառայություններով՝ անկախ այն հանգամանքից ծառայությունների փաթեթի հիմնական ամսավճարից բացի հավելյալ պարտքը գոյացել է բջջային, թե ֆիքսված ծառայությունների մասով:

Պայմաններով սահմանված վճարման ժամկետի ավարտից հետո 2 ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց հաշվեգրված վճարը բաժանորդի կողմից ամբողջությամբ չվճարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի առանց ծանուցման միակողմանիորեն լուծել բաժանորդային պայմանագիրը և բաժանորդից վերցնել հեռախոսահամար(ներ)ը (եթե բաժանորդին տրվել է(են) հեռախոսահամար(ներ)), Սարքը, ինչպես նաև Սարքի տեղադրման/գործածման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները, մալուխը և գանձել չվճարված գումարը:

Բաժանորդը մատուցված ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ եղանակով: Անկանխիկ վճարումը պետք է կատարվի ՄոբիԴրամ վճարային համակարգի միջոցով:
Եթե **«4D»** ծառայությունների փաթեթի շրջանակում Օպերատորից անկախ հանգամանքներում չեն ակտիվանում ֆիքսված ծառայությունները, ապա դադարեցվում է բջջային ծառայությունների մատուցումը: Տվյալ դեպքում բաժանորդը պարտավորվում է ծառայությունների դադարեցման պահից սկսած 10 օրվա ընթացքում վճարել բջջային ծառայությունների մասով հաշվեգրված պարտքն ամբողջությամբ:
**«4D»** ծառայությունների փաթեթի շրջանակում ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի և մատուցված Ֆիքսված/Բջջային ծառայությունների համամասնությամբ:

**Այլ պայմաններ**
**«4D»** ծառայությունների փաթեթի շրջանակում՝ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում ծառայություններից օգտվելու պարտադիր ժամկետը երկարում է ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմաններով տրամադրված ֆիքսված ինտերնետի կրկնապատիկ արագության ու «Հավելյալ 10» հեռուստաալիքների փաթեթի տրամադրման ժամկետը:
**«4D»** ծառայությունների փաթեթի բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե բաժանորդն օգտվել է մատուցված ծառայություններից **«4D»**-ի բաղադրիչ հանդիսացող ծառայություններից վերջինի ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 օրվա ընթացքում: Եթե **«4D»** ծառայությունների փաթեթի բաժանորդը դադարեցնում է բաժանորդագրությունը կամ Պայմաններով սահմանված դեպքերում բաժանորդագրության պայմանագիրը լուծվում է Օպերատորի նախաձեռնությամբ՝ մինչև պարտադիր ժամկետի ավարտը, ապա բաժանորդը պարտավորվում է օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 20 000 ՀՀ դրամի չափով՝ դադարեցման օրվանից հաշված 10 օրվա ընթացքում:
**«4D»**-ի շրջանակում «Ֆիքսված հեռախոսակապի» բոպեավճարների ու «Սմարթ հեռուստատեսության» «Ֆիլմադարան» ծառայության միջոցով ձեռք բերվող ֆիլմերի համար սահմանվում է 11,000 դրամ (ներառյալ ԱԱՀ) գումարով սահմանաչափ: Նշված սահմանաչափը լրանալուն պես կասեցվում են **«4D»**-ում ներառված ֆիքսված ծառայությունները:
**«4D»**-ի շրջանակում բջջային ծառայությունների մասով սահմանվում է 1000 դրամ սահմանաչափ: Սահմանաչափը բարձրացնելու համար անհրաժեշտ է գրավոր դիմում ներկայացնել ՎիվաՍել-ՄՏՍ-ի գրասենյակում:
**«4D»** ծառայություններին հնարավոր է միանալ միայն ք. Երևանի Դավթաշեն համայնքում գտնվող բաժանորդային հասցեներում:
**«4D»** ծառայությունների փաթեթի շրջանակում չի գործում բջջային համարի տեղափոխելիության ծառայությունը:
**«4D»** ծառայությունների փաթեթի շրջանակում չեն տրամադրվում Ռոտելեկոմի և ONEX-ի համագործակցության շրջանակում տրամադրվող առավելությունները:

**«4D»**-ի շրջանակում
**ա**. հնարավոր չէ

- բաժանորդի դիմումի հիման վրա ժամանակավոր կասեցնել ծառայությունները:
- ակտիվացնել «Խոստացված վճարում» ծառայությունը
- անցում կատարել ՎիվաՍել-ՄՏՍ-ի և Ռոստելեկոմի այլ սակագնային փաթեթներից **«4D»** ծառայությունների փաթեթին և **«4D»** ծառայությունների փաթեթից ՎիվաՍել-ՄՏՍ-ի և Ռոստելեկոմի այլ սակագնային փաթեթներին:

բ. հնարավոր է

- իրականացնել անվանափոխություն ժամկետանց պարտքի բացակայության դեպքում:

- օգտվել Ռոստելեկոմի «Հասցեի փոփոխության», «Սարքի փոխարինման/Wi-Fi ակտիվացման», «Ստատիկ IP հասցե», «Ֆիքսված հեռախոսահամարի փոփոխություն», «Գեղեցիկ ֆիքսված հեռախոսահամարի ընտրություն», «Ներբնակարանային տեխնիկական սպասարկում», «Առանձին հեռուստաալիքների ընտրություն», «Հեռուստաալիքների թեմատիկ փաթեթներ», «Ֆիլմադարան», «Ֆիլմերի փաթեթներ», «Մուլտիրում», «Եթերի տեսագրում», «Նախկին հաղորդումներ», «Եթերի կառավարում», «SmartBox Wi-Fi» ծառայություններից: Նշված ծառայությունները կարգավորվում են Ռոստելեկոմի հիմնական պայմաններով:
- մատուցված ծառայությունների հետ կապված հաշվի մանրամասն վերծանում ստանալ Ռոստելեկոմի գրասենյակում ֆիքսված ծառայությունների մասով և ՎիվաՍել-ՄՏՍ-ի գրասենյակում բջջային ծառայությունների մասով:
- Ակտիվացնել հավելյալ ֆիքված ծառայություններ միայն Ռոստելեկոմի վաճառքի և սպասարկման սրահներում և հավելյալ բջջային ծառայություններ միայն ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման սրահներում: